

Որովհետև փէրիք, չարքեր և այլն դողոսունից կը վախենան, արդ պատճառով ամէն կին առեւ մի կը զարկէ կամ շապկի փողպատը (օծիքը) կամ գլխարկի մէջը: Նոյնականի բարձի տակ դանաէ, առեւ և այլն կը դնեն: Նորապսակներ դըռն նոյն ներս մտած և դուրս եղած ժամանակ թուր կը բռնեն դիմուն: Գարնան սլքըներուն երբ անառունները առաջին անգամ դաւրս կը հանեն՝ թունդրի խոչքրիալը կը ձգեն դռան շէմքի տակ. այսպէս և անսովոր կարգուտ տեղացած ժամանակ:

ԿԵՐՊԱՐԱՆԱՓՈԽԹԻՒՆ

Ժողովուրդը կը կարծէ՝ որ մարդիկ երբեմն կը կերպարանափոխին. շատ վտիտ և տկարութեան պատճառով նիշարացած երեխանները կը կոչուին դուռնուրդի:

ա. Երբեմն կը լինին գըռչ գչեր (տես Ճնոֆոր):

բ. Երբ զիշերով տկլող դուրս ենան՝ «երկնուց զիլու փօս (մորթի) կիշնայ վըր մարդս՝ կեղնի գէշ, արդ հասկացողութեամբ վիթխարի և անճոռնի մարդոց գէլունի, հորդոգէլ, մէշշառ-էշշառ-է (քրտ. զիշերային մարդ) անունները կուտան:

գ. Արջը ծագումով հորդ է և ինչպէս կը պատմեն պառաւնները, դիմէ կոչուած ժողովրդից սերած է, դորա համար էլ շատ կը սիրէ մարդոց հետ մօտիկ յարաքերութիւն ունենալ¹⁾: Թէև հէքիաթի ձեռլ բայց հաստատ հաւատալով կը պատմեն դէպէքեր՝ որ արջը «իշտէ ժամանակ մէ, ֆլան գեղէն կնիկ մէ կը փախցու տանէ սար, շաբաթ մ' երկու կը նստի կանի հետ, հապամ կնիկ խարլութենով կը փախնի պրծնալ»:

ԿԱԽԾՐԴՈՒԹԻՒՆ

Մեծ հաւատը կրնալուի կախարդութեան, որոյ ներկայացուցիչներն են՝ «Սողոմոնի», «Ախտարք» և «Վեցհազարիկ» կարգացող թղթբացները:

¹⁾ Դմիկ աղջիկ մի հոգով կը լինի. գետափը անառունի լէշ տեսած ժամանակ՝ կասէ սա՞ն, երանի թէ ես լուսով (գազան, կինդանի) մի լինէ՛ր և իւղ մէ ուտէի. Ասածու հրամանքով կը դառնայ որէ ժողովուրդը կը կարծէ, որ արջն եթէ դէմ ասեն՝ խկոյն կը բարկանայ և կը լարձակուի մարդու վրայ:

Կախարդութեան նորա համար շատ կը հաւատան, ոբով-Հետև Սողոմոն իմաստունք եղած է հեղինակը «վեց հազարիկ» և այլն դրգերու:

Թղթբացները «զերկինք ու զգետինք կը քննեն» «կորեկ կը հանեն սուննի վի (սիւն իվեր), զմարդ կը տկլոցցուն» և այլն:

„Զալ մէ, կրսէր ձէխսաղուազ գիւղացի Ա., մեր տուն թղթբաց մեկաւ, շատ մարդ լէ նստուկ էն (էին). ըսեց ես կոնամ օր զմարդ տկլոցցում, ես չաւտրցաց, ծիծղացի վրէն, թղթբաց հեռու, ունեցաց (գրիչ կաղամարը) առաւ ի ձեռք, զվոցուց (պտտեցուց), համուն (իրեւ թէ) ես զիսի գետի՞ առջև տեսաց, համուն չօլէն կեգէնք մեր տուն, համուն մարդ լէ չըկէր իմ բոլորտան, ե՞ս բայց օր զարկէնք ի գտո... հաղմէ տեսաց օր ծիծղացին վրէս, ես բայց եղաց (նուաղիլ, մարել), ամըցաց, ընկայ թղթբացի յոտք ու ձեռք, աղաշանք պարատանք էրի, զթուղթ բուց (փլցնել) նոր ես պլճաչ աղատաց“.

«Վեցհազարիալի» շնորհիւ թղթբացները կը սովորին նաև ստումբութեան¹⁾, որով կիմանան հողի տակ թաղուած դանձ և զանազան իրեր գտնել:

„Զաղմէ ռամդար մ'եկաւ մեր տուն խօնաղ (հիւր), կասէր Կոփ գիւղացի Յակէն, ըսի ուրին՝ ոլահ՝ թէ ըսիս, ըշտէ մեր գեղի մօտ Ալյուստ, խարաբէն (տեղ մի է) Էռաբա, կայ հորուկ. ըսեց օր հրմալէ յելի առ բուռ մէ սիսեռ, լրնկի յառջևս երթանք, Գացինք, ցիրկուաց դեն էր. զտեղ ցուցուցի, առաւ զիսեռն ու չորս բոլորմընի ցինեց, դարձաւ առաւ զգիրքն ու պտպոտց. ես տեսաց սիսեռներ լրմէն ժողովուած մէկ տեղի Ըսեց ըշտէ յօդա է խաղինէն հորուկ, դու նստի, ըսեց, ես կը կարդամ, հալա շատ բան կայ կարդալու, հանդէ քու այքին թուլու թուլու (տեսակ տեսակ) բան կերևաց, չեղնի վախենան հրմա ձէն էրեցիր՝ մեր ռուկ կերթաց կորի. Աէ, ըսի, յօրին ձէն կէնիմ, քոոցիր իմ. (Կուրանալ). Կարդաց, շատ կարդաց, ես տեսաց կը բարձր եկաւ իմ յառջևսով լրնցաւ գնաց, ես զիս խացիմ (ամուր) բռներ իմ, ընձի ընձի սիրտ կիսամ օր յը վախենամ, էն օր գնաց՝ հաստ մոթներով որոք եկաւ, էլման լվախեցաց. յետև (յետոց) նոր բացառ յառջևս. մեծ որոշուկ որ հրմալ կերևէր՝ որ պտի կործէր (կործանէր) վըր ընձի, ես էլման սիրտ տուի ընձի, լվախեցաց. յետև

¹⁾ „Թամզարկի արուեստ (լրբ ռամկ.) տեսակ մը կախարդութիւն, տաճ. էպէկտած (Առանուն բառարան): Ինչը՝ առաջ առաջնորդութեան, sorcellerie au moyen du sable, géomancie. (Երեք լեզունան ընդարձակ բառ. Տաճկ. հայեն Դաղդիերէն, Միհրան Աբիկեանի):

գահուն ըստց առէք մէկ մազից կախեցին վըր իմ գագթին, ըսի Էդ է. հա իրա սհաթին կը պատի վըր իմ գլխուն, կէնէ զիս հազար փշուր, ես լէ միրցաչ դօմեցի, բուացի, բաի՝ եաման զիս մկա կուպաննեն: Դառնամ իշկիմ (աշքել, նայիմ) օր՝ նա քար՝ նա բան: Թղթբաց հէռսուտաւ (բարիացաւ) վըրէս, ըսեց, Ըստուած գքո տուն աւրէ, օր Էդ փշուր գահ լէ ըըր բուացեր ի Բնէ կեղնէր, քու հոգին կեղնէր, Էւխա աւրուաւ, յելի երթանք էլ բան յեղնլ:

Փօն ու փոշման թողինք եկանք տուն:

Գարի թալել (Գարենմայութիւն) Բուլանըխալ զբէթէ ամէն զիւղերու մէջ կը գտնուին կանալք՝ որոնք զարի թալելով (ձգել, քցել) կիմանան կորսուած առարկալ մի կը գտնուի կամ ոչ:

Պատաւը կառնէ 5—6 հատ զարի և, նշնէ, կասէ բան կորցնողին, քեզ համար մի հատիկ, դիմող անձը լւր գարեհասոր կը ճանաչէ, նա ափ ափի վրայ դրած ձեռքերը կը շարժէ մի քանի անզամ զարիները իրար խառնելու համար, բանալոց յետոյ, եթէ նշնած զարին յառաջ է անցեր՝ կորսուած առարկայն կը գտնուի և հակառակը:

Թիգ չափին. Բաղմաթիւ են նոյնպէս լիու շնչող կանալք, որոնք նմանապէս թէ կորսուած բան գտնելու և թէ օտարութիւն կամ հեռու տեղ գտնող մարդոց վերադարձը իմանալու համար իրենց արկեսոր կը բանեցնեն:

Թիզ չափողը ձախ ձեռքը կը պարզէ և աջ ձեռքի ճըկ կը ըստման (լարուած) թիզը կը դնէ ձախի մատներու վրայ չափելով կը հանէ դէպի վեր, մէկ, երկու, յետոյ վերևսց դասնալով դէպի ներքն՝ մէկէկ, ե-ե-րկու...: Տամարները (ջղերը) կծկուան, թիզ չիգայ տեղը, հետևաբար և ոչ կորսուածը կը գտնուի և ոչ հեռաւորը կուգայ, և հակառակը:

Եղունգ նայելը եւ ֆալշիութիւն¹⁾: Այս կախարդութիւն-

¹⁾ Ֆալքի կը նշանակէ հուշու: յիգան կանալք կունենան սպիրալսոր կամ ձկան գլխու ոսկոր, սադաֆ կամ նման փալլուն առարկալ մի, որու վրայ ուզողի ձեռքը քսել կուտան, պատուիրեցոյ որ մտցի մէջ՝ ինչ որ կուցնան իմանայ, բնորդրան։ յիգանուհին անկապ խօսքերով երբ թէ ցանկացողի պատասխանը կուտայ և գլխից անցածը պատմելով՝ ապագան ևս կը գուշակէ:

ները՝ հշուշողները (ցիգան, չինկեանա, գնջու) կը գործածեն, ուրոնց, ոմանք կը հաւատան և ոմանք ոչ։ Միայն եղանգէ մասին հետևեալ սնոտիապաշտամունքը կայ ժողովոյի մէջ։

1. Եղունգ կտրելու ժամանակ կը հաւաքեն և զիսու վրայով կը ձգեն իստեւ, որպէս զի դատաստանին զայ իրենց գտնէ. ձգելու ժամանակ կասեն. «Դատաստանին արէք գտէք զիս»։

2. Եղունգի վրայ եթէ երակաձև սև դժիկներ լինին՝ որբու նշան կը համարուին։

3. Եղունգի վրայ երբեմն երևացող սպիտակ նշանները՝ նոր հանդերձ հագնելու և զրամ ստանալու նշանակ կըհամարուին։

4. Մաղլաձև կոր եղունգ՝ աղջիկը հարուստ տուն հարս կը գնայ։

5. Երիտասարդները ցիկաններու կանայքը կը կճմթեն (եղունգով ի հարկ է) որ իրանց գերանդիները լու որուին։

Եշբորիլ (ակնանարել, նազար ալմակ). Մեծ հաւատք կընծարուի աշխատելուն. կը կարծուի որ մի կարգ մարդիկ վայ ու ունին և ինչ գեղեցիկ մարդու, անասունի և լաւ գործի վրայ նայեն, մարդք, անասունը կը տկարանան ու կը մեռնեն և դործն էլ զլուս չինայ։

1. Զար աչք ունեցողի առջևից անցնելու ժամանակ ամոքիչը կը չմնին՝ որ աչքը ըրոնի թէ իրեն և թէ առջևը զտնուած անասունին կամ գործին։

2. Երեխալք չաչքը ելու համար, զիսարկներու վրայ ինքուղ ունենաւ, որոմնէն և ուրիշ բոժոժներ կը կարեն։

3. Լաւ ձիերու պարանոցից եռանկիւնի ծալուած ու կարուած և ուղունքներով զարդարուած լուղի (կախարդական) կը կախեն։

4. Բոստանները (սեխեստան) աչքը ու ազատ պահելու համար փայտի զլուխ չեռ խօֆ և հաւկիթի կեճեփներ կը տնկեն։

5. Խակ երը ձձումը (խնոց) աչքը ու իւղիւլ իւղը շուտ չհացնէ, չեղբար (քրդ. և հայ. լէալ կախարդութիւն

• Հայութակ Սահմանադրության համապատասխան առ 112

4669 11-2039

անող) պառաւները իրեք անգամ ձձմի վրայով էշ շնչառն այս ու այն կողմբ, և աղօթք մի պատճառով էշ բարեցնեն:

ՀԱՅՈՒԹՎՈՒԹԻՒՆ ԵՒ ՄՐԵՐ

Աստուծոյ մասին ժողովրդի զիտութիւնը Ա. Գրքի տուած տեղեկութիւնից այս դին չանցնիր. զիտցածնին ևս իստ կցիտուալ և մուլթ գաղափարով կարտապայտեն զիւզացիք:

«Ալտուած՝ զօրաւոր, լուսաւոր, երկնուց ու գետնուց ստեղծողն է, չորս կողմ՝ Սերորէք, Քերորէք, Գ դաս հրեշտակների կանուկ են, «Եօթ իռլ քանց երկինք վերև» զրած է նորալուսաւորէն Աթուոր:

Հայր Աստծոց լիսոյ, ամէն խօսակցութեան, աղօթքի,
բարեմազթութեան, անէծքի և օրհնութեան ժամանակ շարու-
նակ կը լիշուի «Յիսուս-Քրիստոսը», որու ծագման մասին բնաւ-
դապահաբ չունենալով՝ լիեռով միայն զիտեն որ «Աստծու որդի է»:

Ս. Հոգու մասին երբեք զաղախար չունին, և բացի «անուն հօր և Որդւոյ և **Ա.** Հոգուոյ» աղօթքից, որով երեսնին կը խաչակնքեն, ուրիշ պարագալին չկիշուիր:

Առաւոտեան՝ արշալուսին, երբ զիւղացի կինը երեսու դէպի «Հարց ս. Ազօթաբանը» դարձուցած սրտաբուղիս կազօթէ, այսպէս կարտայատէ իւր հաւատոր հանգմանուէլ.

„Օքչնեալի Աստուած, օրչնեալի բարի լուսու Քաղցրիկ Քրիստոս,
Էյ շաղաթաթախ հայոց սուրբ աղօթքան, Էյ շորեք կողման սրբեր,
Սերորէք, Քերորէք, ինն դաս հրիշտակներ, բարեխօս ելնաք առ Աստուած։”

„Նա Տիրամար ս. Աստուածածին, եա Մշու սովորան սուրբ Կարապետ, աստենահաս (Ժամանակին հասնող) բօց ձիաւոր սուրբ Սարդիս, իմ ձեռն ի ձեր փէշն իմ թալի (Երկարացնել, ձգել, քցել), բարեխօս եղնիք արար (ընդհանուր) աշխարհքին, իմ մերաւոր հոգուն“:

„Մեղայ իմ քրջի Աստուած, մեղայ Աստծու Աստուած, երկրի և երկիր (երկնքի և երկիր) Աստեղնող Աստուած, մեղայ Քեզ. Տէր, դու գքու Աստեղնած հոգին չկորցու, իմ մեղք շատէ Քանց Քարնի Քըռէն, Քանց աւազն ի ծովէն, Քանց թուփնի ծառէն, Աստուած, դու իմ մեղք չաշքիս (ի նկատի չառնես) իմ խեղճն (խեղճութիւնը) աշքիս. Տէր, դու ողորմանս հաւբէ ու բարձրէն (ըրդ.՝ 72 ազգաց), ամե-